ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Փետրվարի 5-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ռուս մտավորականների պատվիրակությանը, որ Հայաստան է ժամանել ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին Սվյատոսլավ Ֆյոդորովի անվան միջազգային մրցանակով պարգևատրելու առիթով: Պատվիրակության կազմում էին Սվյատոսլավ Ֆյոդորովի անվան հիմնադրամի նախագահ, մեծանուն գիտնականի այրին՝ տիկ. Իրեն Ֆյոդորովան, անվանի ակադեմիկոս Եվգենի Վելիխովը, շախմատի աշխարհի բազմակի չեմպիոն, խաղաղության ֆոնդերի միջազգային ասոցիացիայի նախագահ Անատոլի Կարպովը, մշակութային ու հասարակական գործիչ Իոսիֆ Կոբզոնը, «Ռոսիա» շարժման քաղխորհրդի փոխնախագահ Լևոն Չախմախչյանը և այլոք:

Նորին Սրբությունը ողջունելով հյուրերին՝ նշեց, որ մշտապես ուրախ է Մայր Աթոռում ընդունել ռուս ժողովրդի զավակներին, որոնց այցելությունները Հայաստան հայ-ռուսական բարեկամության վկայություններն են:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ երկու ժողովուրդների բարեկամության մասին փաստեցին և Հայաստանի նկատմամբ իրենց ջերմ վերաբերմունքն արտահայտեցին նաև տիկին Ֆյոդորովան և պատվիրակության մյուս անդամները: